ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/101

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Լ. Մկրտչյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 03Ա085444)

«Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 17.03.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2022թ. թիվ 26/26-1/4309-2022 գրությամբ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության 07.03.2022թ. թիվ 44 գրության հիման վրա,

15.03.2022թ. թիվ 26/26-1/4309-2022 գրությամբ նախաձեռնել է «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու) թղթային եղանակով հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չափաբաժիններում (այսուհետ՝ Գնման առարկաներ): «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Մրցույթի 1-ին և 2-րդ չափաբաժիններին ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Հայտով առաջարկված ապրանքները համապատասխանում էին (համարժեք էին) Գնման առարկաներին, սակայն գնահատման արդյունքում Պատվիրատուն Հայտը մերժել է այն պատճառաբանությամբ, որ առաջարկված ապրանքները չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական չափանիշներին:

Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը թղթային եղանակով հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում: Մրցույթի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չափաբաժիններում: Գնման առարկաների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը ներկայացված է ստորև՝ թիվ 1 աղյուսակում:

աղյուսակ թիվ 1

Ապրանքի	
անվանումը	տեխնիկական բնութագիրը
ԷՑՎ – 12-210-	ԷՑՎ – 12-210-55 HPO (կամ համարժեք)

55 պոմպ	- D-281մմ, - Լ -1850 մմ - քաշը – առավելագույնը 280 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 210 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա
ԷՑՎ – 12-160-65 պոմպ	ԷՑՎ – 12-160-65 ՀՐՕ (կամ համարժեք) - D-281մմ, - Լ -1345 մմ - քաշը - առավելագույնը 220 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 160 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա

02.03.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության հայտը վերագնահատվել է և 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ: Անհամապատասխանությունները նկարագրվել են ոչ հստակ՝ վերացական ձևով, մասնավորապես՝ արձանագրությամբ նշվել է, որ. «ԷՑՎ 12-160-65 ՀՐԿ մակնիշի պոմպը համարժեք չէ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական չափանիշներին»: Այնուհետև 03.03.2022թ.-ին Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը Հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած «անհամապատասխանությունների» վերաբերյալ և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել, սակայն չսպասելով այդ ժամկետի ավարտին Պատվիրատուն 04.03.2022թ.-ի ժամը 14:00-ին գումարել է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ժամանակ Ընկերության Հայտը մերժվել է:

04.03.2022թ-ի ժամը 14:00-ի թիվ 4 արձանագրությամբ Հայտի մերժումը արձանագրվել է ոչ հստակ՝ վերացական ձևով, մասնավորապես՝ նշվել է, որ. «Հիդրոմաշ սերվիս ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագրեր /Հավելված 1.1/ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որոնք սակայն չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքնրի տեխնիկական չափանիշներին:»:

Ընկերությունը փորձել է կատարել Հայտը շտկելու վերաբերյալ Պատվիրատուի պահանջը, մասնավորապես՝ փոփոխել է 1-ին ու 2-րդ չափաբաժինների համար Հայտով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը և ուղարկել է Պատվիրատուին: Ընկերությունը Հայտով ներկայացրել է հրավերով սահմանված գնման առարկաներին համարժեք ապրանքներ, քանի որ Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում սահմանված էր, որ հայտով կարող են առաջարկվել հրավերով սահմանված ապրանքներին համարժեք ապրանքներ, այն է՝ 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը առաջարկել է ЭЦВ 12-210-55 НРО իսկ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկել է ЭЦВ 10-160-65 НРО ապրանքները (պոմպերը):

Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

«1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

3. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:»

Վերոգրյալից հետևում է, որ եթե մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա պատվիրատուն հայտերի բացման և գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնում է և նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը հայտում տեղ գտած անհամապատասխանությունները շտկել: Ընդ որում շտկված հայտը մասնակիցը պատվիրատուին է ուղարկում էլեկտրոնային փոստի միջոցով: Հաշվի առնելով նշյալ հանգամանքը կարող ենք եզրահանգել, որ հայտը կարող է շտկվել իսկ շտկված հայտը գնահատող հանձնաժողովին կարող է ուղարկվել մինչև կասեցման ժամկետի՝ օրվա ժամը քսանչորսը, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, ընդ որում նույն հոդվածի 3-րդ մասի հաաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Վերոգրյալից հետևում է, որ պատվիրատուն հայտը շտկելու համար ժամանակահատված սահմանելիս այն պետք է սահմանի այնպես, որ շտկված հայտը ներկայացնելու համար ժամանակահատվածը լինի մինչև հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը մասնակցին ուղարկելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 24:00-ն: Այսինքն՝ մասնակիցը իրավունք ունի հայտը շտկել և շտկված հայտը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել պատվիրատուին մինչև հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 24:00-ն:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, 03.03.2022թ.-ին Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը Հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած «անհամապատասխանությունների» վերաբերյալ և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել, սակայն չսպասելով այդ ժամկետի ավարտին Պատվիրատուն 04.03.2022թ.-ի ժամը 14:00-ին գումարել է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ժամանակ Ընկերության Հայտը մերժել է: Այսինքն՝ նշյալից կարող ենք փաստել, որ Պատվիրատուն խախտել է վերը նշված իրավական ակտերով սահմանված նորմերը,

քանի որ Ընկերության Հայտը գնահատել և մերժել է մինչև Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի ավարտվելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Կարգ 41-րդ համաձայն. «41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...) Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:»:

Կարգի 42-րդ համաձայն՝ «42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):»

Կարգի 43-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ «43. Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) (...): Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.»

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, 02.03.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության հայտը վերագնահատվել է և 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ: Անհամապատասխանությունները նկարագրվել են ոչ հստակ՝ վերացական ձևով, մասնավորապես՝ արձանագրությամբ նշվել է, որ. *«ЭЦВ 12-160-65 НРК մակնիշի պոմպը համարժեք չէ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական չափանիշներին:»:* Այնուհետև 03.03.2022թ.-ին Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը Հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած «անհամապատասխանություն-ների» վերաբերյալ և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել: Ընկերությունը փորձել է կատարել Հայտը շտկելու վերաբերյալ Պատվիրատուի պահանջը, մասնավորապես՝ փոփոխել է 1-ին ու 2-րդ չափաբաժինների համար Հայտով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը և ուղարկել է Պատվիրատուին: Ընկերությունը Հայտով ներկայացրել է հրավերով սահմանված գնման առարկաներին համարժեք ապրանքներ, քանի որ Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում սահմանված էր, որ հայտով կարող են առաջարկվել հրավերով սահմանված ապրանքներին համարժեք ապրանքներ, այն է՝ 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը առաջարկել է ЭЦВ 12-210-55 НРО իսկ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկել է ЭЦВ 10-160-65 НРО ապրանքները (պոմպերը): Սակայն, 04.03.2022թ-ի ժամը 14:00-ի թիվ 4 արձանագրությամբ Պատվիրատուն Ընկերության Հայտը մերժել է, ընդ որում թիվ 4 արձանագրությամբ Հայտի մերժումը արձանագրվել է ոչ հստակ՝ վերացական ձևով, մասնավորապես՝ նշվել է, որ. *«Հիդրոմաշ սերվիս ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագրեր /Հավելված 1.1/ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որոնք սակայն չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքնրի տեխնիկական չափանիշներին:»*:

Վերոգրյալից կարող ենք փաստել, որ թիվ 3 և թիվ 4 արձանագրություններով Հայտում արձանագրված անհամապատասխանությունները նկարագրվել են ոչ հստակ՝ վերացական ձևով, որպիսի հանգամանքներում խախտվել են Կարգի 41-րդ կետը և 43-րդ կետի 1-ին ենթակետը: Հարկ է նշել, որ Կարգով սահմանված՝ Հայտում

արձանագրված անհամապատասխանությունները մասնարմասն նկարագրելու պահանջը ինքնանպատակ չէ, մի դեպքում այն ուղղված է նրան, որ մասնակիցը նկարագրին ծանոթանալով կարողնա հստակ ընկալել թե հայտում ինչը չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին և դրան համապատասխան հայտում կատարել պանաջվող շտկումը իսկ մյուս դեպքում այն մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից: Ընդ որում հայտում արձանագրված անհամապատասխանությունը մանրամասն նկարագրելը կոչված է պարզաբանելու, թե ինչու է հայտը ներկայացվում շտկման կամ մերժվում, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում գնահատող հանձնաժողովի գործողությունների օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Ուստի Հայտում արձանագրված անհամապատասխանությունները մանրամասն չնկարագրելը վկայում է այն մասին, որ պատվիրատուն գնման գործընթացը անց է կացրել «օրենքի» խախտումներով, որի արդյունքում սահմանափակվում է Օրենքով սահմանված մասնակցի իրավունքները:

3.3. Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ պատվիրատուն գնման գործընթացը անց է կացրել «օրենքի» խախտումներով իսկ Ընկերությունը գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն խախտելու միտում չի ունեցել և մեր կարծիքով չի խախտել: Ուստի խնդրում ենք Ընկերությանը չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված խախտումը:

4. Պահանջը

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/101 ծածկագրով ընթացակարգը»:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Սույն դիրքորոշմամբ հարկ ենք համարում անդրադառնալ, Մրցույթի 24.02.2022թ.-ի թիվ 2 արձանագրությանը, մասնավորապես այդ արձանագրությամբ Ընկերության հայտը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, գնահատվել է բավարար, որիպիսի հանգամանքներում գնահատող հանձնաժողովը այդ նիստով իրացրել էր հայտը

գնահատելու «օրենքով» սահմանված իր գործառույթը: Ուստի այդ նիստից հետո վերջինս Ընկերության հայտը վերագնահատելու իրավասություն չուներ: Ելնելով նշյալից ևս մեկ անգամ կարող ենք փաստել, որ գնահատող հանձնաժողովը մերժելով Ընկերության հայտը գործել է ոչ իրավաչափ: Այսպիսով՝ վերահաստատելով մեր պահանջը, խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/101 ծածկագրով ընթացակարգը»:

«Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/101 ընթացակարգի շրջանակներում 18.03.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված դիրքորոշումը:

3. **<u>«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.03.2022թ. թիվ 44 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիր» ջրօգտագործողների» ընկերության կողմից 2022 թվականի փետրվարի 17-ին հայտարարված ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով պոմպերի ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտով ներկայացված տեխնիկական բնութագրում /Հավելված 1.1/ արձանագրված անհամապատասխանությունը, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Ընկերության կողմից խախտվել է Կարգի 42-րդ և հրավերի 8.9 կետերով սահմանված պայմանները, ինչի հիման վրա հայտը մերժվել է Կարգի 45-րդ կետով

սահմանված ժամկետում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/101 ընթացակարգի շրջանակներում 18.03.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2022/101 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/101 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպվել է «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը /Հավելված 1.1/ չի համապատասխանում «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից պահանջված տեխնիկական չափանիշներին, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացված 12-160-65HPK մակնիշի պոմպը համարժեք չէ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական չափանիշներին և որոշում կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 03.03.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագրեր /Հավելված

1.1/ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որոնք սակայն չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքների տեխնիկական չափանիշներին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2022թ. թիվ 26/26-1/4309-2022 գրությունը, «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության 07.03.2022թ. թիվ 44 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության էլեկտրոնային նամակը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը

լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին</u>***

<u>ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.8-րդ և 8.9-րդ ենթակետերի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով

ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:</u>***

Եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից կազմակերպվել է «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը /Հավելված 1.1/ չի համապատասխանում «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից պահանջված տեխնիկական չափանիշներին, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացված 12-160-65HPK մակնիշի պոմպը համարժեք չէ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական չափանիշներին և որոշում կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 03.03.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագրեր /Հավելված 1.1/ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որոնք սակայն չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքների տեխնիկական չափանիշներին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ պահանջները, ինչպես նաև իր իսկ կողմից կազմված հրավերով սահմանված պահանջները, այն է՝ ***<u>մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները</u>***, այսինքն՝ արձանագրելով

անհամապատասխանություններ, թե՛ արձանագրության, թե՛ Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Ընկերությունը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.03.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրել է անհամապատասխանություն Ընկերության հայտով ներկայացված 2-րդ չափաբաժնի մասով միայն և տվյալ չափաբաժնի մասով 03.03.2022թ. Ընկերությանն ներկայացրել է շտկման պահանջ, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մերժելով «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը նաև 1-ին չափաբաժնի մասով՝ շտկման պահանջ չներկայացնելու պայմաններում, թույլ է տվել Կարգի 41-րդ և 42-րդ կետերով սահմանված պահանջների խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ արձանագրում եմ նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի հայտում 2-րդ չափաբաժնի մասով արձանագրելով անհամապատասխանություններ՝ շտկման վերաբերյալ ծանուցել է 03.03.2022թ., այնուհետև՝ 04.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ մերժել է վերջինիս հայտը, որպիսի պայմաններում արձանագրում եմ, հետևյալը.

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.03.2022թ. ծանուցելով Ընկերությանը՝ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, 04.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում (մեկ աշխատանքային օր ժամկետը լրանում է 04.03.2022թ. ներառյալ) որոշում է կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2022թ. թիվ 26/26-1/4309-2022 գրությամբ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**